


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԴԱՐԵԴ ՎՃՏԱՍՊԻ
ԲԻՍԵԹՈՒԵՑԱՆ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՄՔԻՈՆ
ԴԱՍԱՀԱՍՈՒԹՅՈՒՆ


ԵՐԵՎԱՆ



ԴԱՐԵԼ ՎՇՏԱՍՊԻ ԲԻՍԵԹՈՒՆՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանությունը բնագրից, տուաշտքանը
և ծանոթագրությունները՝ Գ. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

A $\frac{\pi}{33239}$



Обменный фонд

БИСЕТУНСКАЯ НАДПИСЬ ДАРИЯ
ВИШТАСПА

Перевод с подлинника, предисловие
и примечания Г. М. НАЛБАНДЯНА

(На армянском языке)

Издательство
Ереванского государственного университета
Ереван—1964

Հին պարսկերենի հիշատակարանները հասել են մեզ Աքեմենյան դինաստիայի թագավորների սեպագիր արձանագրություններով, որոնք ընդգրկում են 521—330 թվականների շրջանը:

Պարսկաստանի հին մայրաքաղաքներում՝ Թերսեպոլիսում, Սուլայում (Շոշ), Համադանում եղած արձանագրություններից բացի արձանագրություններ կան նաև այլ տեղերում, ժայռերի վրա, ինչպես Բիսեթունյան և Ալվանդի արձանագրությունները:

Հին պարսկական սեպագիր արձանագրություններից մեծագույնը Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունն է, որը փորագրված է Բիսեթուն բարձրագիր ժայռի վրա, Քերմանշահի մոտակայքում. այն իրենից ներկայացնում է ժայռերի մի վիթխարի զանգված, որը հղկված է մեծ խնամքով և վրան փորագրված է ծավալուն արձանագրություն։ Արձանագրությունը բաղկացած է Հսկայական 9 սյունից, որոնցից 5 սյունակը գրված է հին պարսկերենով (76 պարագրաֆ, 414 տող), 3 սյունակը՝ Էլամերեն և մեկ սյունակը՝ բարելերեն։

Այս արձանագրության ստորին տողերը մեծ շափերով աղարտված են; Հատկապես վերջին սյունը, որը միայն հին պարսկերեն է և թարգմանություն չունի։

Այս մեծ արձանագրության վրա մի ռելեֆ է քանդակած. արքան, որին ուղեկցում են երկու զինվորներ, մի ոտքը դրել է իր առջև պառկած թշնամու վրա, որը աղերսալից ձեռքերը տարածել է դեպի նաև կարծես թե ներում է խնդրում, ետքից մոտենում են 9 հոգի՝ շղթայած, որոնք իրար հետ կապված են երկար պարանով, որ փաթաթված է նրանց վղին։

Բոլորի վրա ճախրում է, դեմքով դեպի թագավորը դարձած վերին մեծը՝ Ահրամազդը՝ ճաճանշավոր զգեստներով։

ԱՀՐԱՄԱՎՈՎ իր ձեռքին բռնել է մի օղակ, որը հանդիսանում
է իշխանության խորհրդանիշը: Նա կարծես իր ներկայու-
թյամբ հաստատում է Դարեհի գործունեության ճշմարտու-
թյունը, որն այդ հրովարտակում հենվում է նրա վրա, հաս-
տատելով, որ այն, ինչ արել է ինքը, կատարված է Ահրա-
մազդի կամքով:

Համառոտ հավելվածներից իմացվում է, որ այդ ֆիգու-
րաները ապստամբներ են, որոնց նվաճման մասին պատմվում
է գլխավոր արձանագրության մեջ: Համաձայն այդ հավել-
վածներից մեկի՝ Դարեհի ոտքերի տակ պառկած անձնագործու-
թյունը Մոդ Գառամատան է, որ ստում էր, ասելով՝ «Ես Բար-
դիան եմ, Կյուրոսի որդին. Ես արքա եմ»:

Պարսկական արձանագրությունները հայտնի էին Հին Հույներին, որոնցից Հերոդուսը, Դիոգորոսը, Ստրաբոնը և
այլք հիշատակում են այդ արձանագրությունները:

Տիւ ժամանակներից պարսկական սեպագրերի մասին
եղել են տարբեր կարծիքներ: Օրինակ՝ Հույն պատմիլ Դիո-
գորոսը Բիսեթունյան արձանագրության մասին գրում է; որ
այն պատկանում է Շամիրամ թագուհուն: Նա Դարեհին շփո-
թում է Շամիրամի հետ, իսկ արձանագրության մեջ պատկեր-
ված 11 հոգուն (որոնցից երկուսը Դարեհի սպասավորներն
են, իսկ 9-ը ապստամբները) համարում է թագուհու զորա-
խումբը:

Եվրոպայում պարսկական սեպագրությունները հայտնի
դարձան մոտ 16-րդ դարում:

Պարսկական հնագույն սեպագրերից գիտնականներն ա-
ռաջին անգամ ուսումնասիրել են Թախիթե Զամշիդի (Պերսե-
պոլիսի) արձանագրությունները: Զնայած այն բանին, որ Բի-
սեթունյան արձանագրությունները եղած արձանագրություն-
ներից մեծագույնն են, սակայն նրանց՝ բարձրագիր հսկայա-
կան ժայռի գագաթին փորագրված լինելու հանգամանքը եր-
կար ժամանակ հնարավորություն չի տվել ձեռնամուխ լինե-
լու դրանց ուսումնասիրությանը: Նույնիսկ այսօր էլ, գիտու-
թյան և տեխնիկայի զարգացման պայմաններում, նրանց ըն-
թերցումը կապված է որոշ դժվարությունների հետ:

Բիսեթունյան արձանագրությունները առաջին անգամ

1836 թ. պատճենվել են Հենրի Ռաուլինսոնի (Henry Rawlinson) կողմից: Անգլիական բանակի սպա Ռաուլինսոնը 1833 թ. որպես զինվորական խորհրդական գործուղվում է իրան:

1835 թ. նա պատճենում է նախ Համագանի Ալվանդ լեռան լանջին գտնված արձանագրությունը, իսկ 1835—1837 թ. թ. պատճենում ու թարգամանում է նաև Բիսեթունյան արձանագրության մի մասը: Սակայն շուտով նա նոր նշանակում ստանալով մեկնում է Պարսկաստանից և միայն 1844 թվականին կրկին վերագրանալով Քերմանշահ՝ շարունակում է իր սկսած գժվարին գործը:

Ռաուլինսոնը արձանագրության պատճենման մի մասը կատարում է անձամբ, ժայռի գագաթից պարանով կախ ընկած, մի մասն էլ ՚ի քուրդ երեխայի միջոցով, որը նույնպես պարանով կապված, ժայռի գագաթից ցած իշեցնելով, Ռաուլինսոնի ցուցումով թուղթը սեպանիշներին սեղմելով կատարում է պատճենահանումը:

1846—1847 թ. թ. Ռաուլինսոնին հաջողվում է հրատարակել Բիսեթունյան արձանագրության իր կողմից պատճենված, վերծանված ու թարգմանված ամբողջական տեքստը:

Ռաուլինսոնից հետո Բիսեթունյան արձանագրություններով զբաղվեցին և նրա ընթերցման ու թարգմանության մեջ ճշտումներ մատցրեցին մի շարք գիտնականներ, որոնցից Հիշատակության արժանի են Համերկանական Վիլյամ Ջակսոնը, Կինգը և Տոմասոնը, Տոլմանը, Վեյսբախը, Կամերոնը և Կենտը:

Բիսեթունյան արձանագրությունից առանձին հատվածներ առաջին անգամ ոռուերեն լեզվով թարգմանել է ակադ. Կ. Գ. Ջալիմանը:

Արձանագրության լրիվ տեքստը թարգմանել են Ա. Ա. Ֆրեյմանը, ինչպես նաև Վ. Ի. Արակը:

Հին պարսկական արձանագրությունները ունեն պատմական մեծ արժեք: Նախ նրանց շնորհիվ մենք տեղեկություններ ենք ստանում իրանի նախնական պատմության մասին բուն աղբյուրից: Այդ արձանագրությունների տված տեղեկությունները ամենահավաստին են, քանի որ նրանք փո-

բագրված լինելով ժայռերի վրա, ու մի նորամուծության չեն հնթարկվել և մեզ հասել են անաղարտ ձևով:

Այդ արձանագրությունների շնորհիվ մենք զանազան տեղեկություններ ենք ստանում նաև հարևան ժողովուրդների պատմության մասին: Ընդլայնվում են նաև մեր աշխարհագրական ու դիցարանական գիտելիքները:

Ինչպես հայտնի է, հայ և պարսիկ ժողովուրդները փոխհարաբերության մեջ են մտել իրենց պատմական կյանքի հենց արշալուսին: Այս փոխհարաբերությունների մասին առաջին հավաստի տեղեկություններին մենք ծանոթանում ենք Դարեհի թողած, հենց Բիսեթունյան ընդարձակ արձանագրության շնորհիվ, որը հայ ժողովրդի հնագույն պատմության կարևորագույն աղբյուրներից մեկն է:

Բիսեթունյան արձանագրության արմեններին վերաբերող մասը (վեց պարագրաֆ) հայերեն թարգմանել է Կ. Բասմաչյանը¹, որը և ամբողջությամբ մեջ է բերված Հ. Մանադյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Ա. Հատորում:

Նկատի ունենալով նշված արձանագրության մյուս հատվածների կարեռությունն ու նրանց հայերեն թարգմանության բացակայությունը, որոշեցինք հայերեն թարգմանել ամբողջ արձանագրությունը:

Թարգմանությունը կատարել ենք բնագրից: Թարգմանության ժամանակ աշխատել ենք, ըստ հնարավորին, բնագիրն արտահայտել ճիշտ, պահպանելով նրա ոճն ու կոլորիտը: Անձնական անունները բերել ենք հին պարսկերենի արտասանությամբ, բացառությամբ մի քանիսի, այն է՝ Աշրամազդ, Դարեհ, Աքեմենյան, Կամբիս:

Աշխարհագրական և էթնիկական անվանումները բերված են սովորական հանրահայտ ձևով, իսկ հագվաղեալ հանդիպողները՝ հին պարսկերենի հնչմամբ, տալով նրանց համապատասխան բացառությունը տողատակում:

¹ Տե՛ս Կ. Բասմանյան, «Դարեհի արշավանքն ի հայոց բանակար, հատ. Ա, Պարիս, 1899.

§ 1

Ես (իմ) Դարեհը, մեծ արքան, արքաների արքան, Փարսիկան, Կրկրների թագավորը, Վշտասպի որդին, Աքեմենյան Արշամի թոռը:

§ 2

Դարեհ թագավորն ասում է.—Իմ հայրը Վշտասպն է, Վշտասպի հայրը՝ Արշամը, Արշամի հայրը՝ Արյարամնեն, Արյարամնեի հայրը՝ Զիշփիշը, Զիշփիշի հայրը՝ Աքեմենը,

§ 3

Դարեհ թագավորն ասում է.—Այն բանի համար ենք մենք կոչվում Աքեմենյան, որ վաղուց ի վեր ճանաշված ենք, վաղուց ի վեր մեր սերունդը թագավորական սերունդ է:

§ 4

Դարեհ թագավորն ասում է.—Ութ հոգի իմ տոհմից անցյալում թագավորել են, ևս եմ իններորդը. ինը հոգի հաջորդաբար թագավոր ենք:

§ 5

Դարեհ թագավորն ասում է.—Շնորհիվ Ահրամազդի² եռ թագավոր եմ. Ահրամազդը ինձ թագավորություն շնորհեց,

§ 6

Դարեհ թագավորն ասում է.—Սրանք են այն երկրները, որ իմ հպատակը եղան, Ահրամազդի շնորհիվ ես նրանց թա-

¹ Պարսկաստան.

² Իրանական պանթեոնի գլխավոր աստվածը:

գավորն եմ. **Փարս**, Խուզիան, Բաբելոն, Ասուրեստան, Արաբիա, Մուղրայ¹. այն երկրները, որ ծովում են, Սպարդա², Հունաստան, Միոփիա, Արմինա, Կապագովկիա, Պարթևաստան, Զբանկա³, Հարուփիվա⁴, Խորեզմ Բակտրիա, Սողդ, Գանդարա⁵, Սագաստան (Սկյովիա), Սատագուշ⁶, Արախովիա (Հարվաթ)⁷, Մակա⁸ բոլորը միասին 23 երկիր:

§ 7

Դարեհ թագավորն ասում է. — Սրանք են այն երկրները, որ հպատակվեցին ինձ, Ահրամազդի շնորհիվ իմ ծառաներն էին, ինձ բաժ (Հարկ) էին բերում, այն ինչ (որ) ինձնից ասվում էր գիշերը կամ ցերեկը, (նրանք) այն էին կատարում:

§ 8

Դարեհ թագավորն ասում է. — Այս երկրների մեջ այն Յարգուն, որը բարեկամ էր, նրան լավ հարգեցի, նրան, որ թշնամի էր, խիստ պատժեցի: Ահրամազդի շնորհիվ սրանք են այն երկրները, որոնցում իմ հրամանները կատարեցին: Ինչ որ իմ կողմից ասվում էր նրանց այն էին անում:

§ 9

Դարեհ թագավորն ասում է. — Ահրամազդն ինձ այս թագավորությունը շնորհեց, Ահրամազդն ինձ օգնեց, մինչև այս թագավորությանը տիրացա, Ահրամազդի շնորհիվ այս թագավորությունը ունեմ:

¹ Եզիզառու:

² Սարդիա, Սափերդ:

³ Ժամանակակից Սիսաանը:

⁴ Ժամանակակից Հերաթը:

⁵ Ղազնե:

⁶ Քաբուլ:

⁷ Ղանդահար:

⁸ Ժամանակակից Մոկրան — Պարսկաստանի և Բելառվիստանի հարավային մասը, Հնդկական օվկիանոսի մոտ:

§ 10

Դարեհ թագավորն ասում է. — Այս է իմ արածը, այն բանից հետո, երբ ես թագավոր դարձա: Մեր սերնդից կյուրոսի որդի Կամբիս անունով մեկը թագավոր էր, այն Կամբիսին Բարդիյա անունով մի եղբայր կար, Կամբիսի հետ մի հորից ու մի մորից: Հետո Կամբիսը Բարդիյային սպանեց: Երբ Կամբիսը Բարդիյային սպանեց, ժողովուրդը տեղապահ չէր, որ Բարդիյան սպանվել է, հետո Կամբիսը Մուղրայ գնաց: Երբ Կամբիսը Մուղրայ գնաց, ժողովուրդը թշնամացավ. ուստի սուտը երկրում շատ տարածվեց, թե՛ Փարսում, թե՛ Մեդիայում և թե՛ ուրիշ երկրներում:

§ 11

Դարեհ թագավորն ասում է. — Հետո կար մի մարդ մոգք Գառումատա անունով, նա Փայիշիահուվարդիայում ապստամբեց. Արակազրիշ անունով մի սար կա՝ այնտեղից. Վիշախնա ամսի 14-ն էր¹, երբ ապստամբեց. նա ժողովուրդին այսպես խարեց. «Ես Բարդիյան եմ՝ Կյուրոսի որդին, Կամբիսի եղբայրը»: Ուստի ամբողջ ժողովուրդը ըմբոստացավ, Կամբիսից դեպի նրա կողմը գնացին և՛ Փարսան, և՛ Մեդիան, և՛ այլ երկրներ նա խլեց: Գարմապաղա ամսի 9-ն էր², երբ այսպես թագավորությունը վերցրեց (խլեց): Հետո Կամբիսը ինքնասպանությամբ մեռավ:

§ 12

Դարեհ թագավորն ասում է. — Այս թագավորությունը, որ Գառումատա մոգք Կամբիսից վերցրեց, վաղուց ի վեր մեր սերնդինն էր, հետո Գառումատա մոգք Կամբիսից խլեց և՛ Փարսը, և Մեդիան, և այլ երկրներ. նա (սրանք) յուրացրեց և իր անձնականը դարձրեց. նա թագավոր դարձավ:

¹ Մարտ ամիս, 522 մ. թ. ա. Այս և հետագա թվականները բերվում են ըստ Կյունիգի:

² Ապրիլ ամիս, 522 մ. թ. ա.:

§ 13

Դարեհ թափավորն ասում է.—Զկար մի մարդ ո՛չ փարսեցի, ո՛չ մեղացի, ոլ մեր սերնդից որևէ մեկը, որ այն Գառամատա մոգից իշխանությունը կարողանար վերցնել: Ժողովուրդը նրա բռնությունից վախենում էր: Նա սպանեց շատ ժողովուրդներ, որոնք հնուց (անցյալում) Բարդիային էին ճանաշում. այն բանի համար էր ժողովրդին սպանում, որ «Այնի թե ինձ ճանաչեն, որ ես Բարդիան չեմ՝ Կյուրոսի որդին». որևէ մեկը հանդինություն չուներ որևէ բան Գառամատա մոգի հասցեին (վերաբերյալ) ասելու, մինչև որ ես հասա: Ես Ահրամազդին օգնության կանչեցի: Ահրամազդն ինձ օգնեց. Բագայադիշ ամսի 10-ն էր¹: Հետո մի քանի մարդով սպանեցի այն Գառամատա մոգին և այն մարդկանց, որոնք նրա առաջին բարեկամներն էին: Նիսայա գավառում Սիկայավատիշ անունով բերդ կա, այնտեղ նրան սպանեցի, նրա թագավորությունը ես վերցրի: Ահրամազդի շնորհիվ ես թագավոր դարձա: Ահրամազդն ինձ թագավորություն շնորհեց:

§ 14

Դարեհ թագավորն ասում է.—Թագավորությունը, որ մեր սերնդից վերցված էր, այն ես վերականգնեցի (իր տեղը դրեցի), ես նրա թագավորական գահը ամրապնդեցի, ինչպես անցյալում էր, այնպես էլ արեցի: Այն տաճարները, որ Գառամատա մոգը ավերեց, ես վերականգնեցի, ժողովրդի արոտավայրը, կալվածքը, ունեցվածքը և ամեն ինչ, որ Գառամատա մոգը վերցրել էր (հետ վերցրեցի), ես ժողովրդին իր տեղը ամրացրի թե՛ մեղացիներին, թե՛ այլ երկրների (ժողովրդին): Ինչպես անցյալում, այնպես ես ինչ որ վերցված էր, ետքերեցի. Ահրամազդի շնորհիվ ես այս (գործերը) արեցի. ես ջանացի Ահրամազդի շնորհիվ, որպեսզի Գառամատա մոգը շվերցնի թագավորական գերդաստանը, որը մերն է:

¹ Սեպտեմբեր ամիս, 522 մ.թ.ա.

§ 15

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ արածը, այն բանից հետո, երբ թագավոր դարձա:

§ 16

Դարեհ թագավորն ասում է.— Երբ որ (այն ժամանակ, երբ) Գառմատա մողին սպանեցի, հետո Աթրինա անունով մի մարդ՝ Ռւպագարամայի որդին, Խուզեստանում ապստամբեց, ժողովրդին այսպես ասաց. «Ես Խուզեստանի թագավորն եմ», ուստի խուզեստանցիները ապստամբեցին և դեպի այն Աթրինան գնացին: Նա Խուզեստանում թագավոր դարձավ. և մեկ բարեկլոնացի մարդ Նադինտաբիր անունով, Ափնիրացի որդին, Բարեկլոնում ապստամբեց, ժողովրդին այսպես սուտ ասաց.—«Ես Նաբուկուդորաշարան եմ, որդին Նաբունացիտայի», ուստի Բարեկլոնի ժողովուրդը բոլորը դեպի այն Նադինտաբիրի (Կողմը) անցավ: Բարեկլոնը ապստամբեց, Բարեկլոնի թագավորությունը նա վերցրեց:

§ 17

Դարեհ թագավորն ասում է.— Հետո ես մեկնեցի Խուզեստան, այն Աթրինան կապված ինձ մոտ բերվեց (և) ես նրան պանեցի:

§ 18

Դարեհ թագավորն ասում է.— Հետո ես Բարեկլոն գնացի, դեպի այն Նադինտաբիրը, որը իրեն Նաբուկուդորաշարա էր կոչում. Նադինտաբիրի բանակը Տիգրիսը (իր ձեռքում) ուներ, այնտեղ կանգնած էր, և նա ուներ նավեր: Հետո ես բանակը տիկերի վրա զրեցի, մյուսներին ձիով գուրս տարա. Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ Տիգրիսն անցա. այնտեղ Նադինտաբիրի բանակը բավականին ջարդեցի: Աթրիադիա ամսի 26-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

¹ 13 գեկտեմբերի 522 մ. թ. ա.:

§ 19

Դարեհ թագավորն ասում է.— Հետո ևս Բարելոն մեկնեցի: Դեռ Բարելոնին չէի հասել, Զաղանա անունով քաղաքում Ուֆրատովայի¹ վրա (Կրկայնությամբ), այնտեղ այն Նադինտարփիրը, որ իրեն նարուկուդրաշարա էր կոշում, բանակով ճակատամարտի իմ դեմ եկավ. Հետո ճակատամարտ տվեցինք. Աջրամազդն ինձ օգնեց, շնորհիվ Աջրամազդի Նադինտարփիրի բանակից բավականին սպանեցի, մյուսները ջուրը նետվեցին, և ջուրը նրանց տարավ. Անամակա ամսի շ-ն էր²: Երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

ԵՐԿՐՈՐԴ ՍՅՈՒՆԱԿ

§ 20

Դարեհ թագավորն ասում է.— Հետո Նադինտարփիրը սակավաթիվ հեծյալներով դիմեց փախուստի և հասավ Բարելոն: Ուստի ե՛ս ուղևորվեցի Բարելոն: Աջրամազդի շնորհիվ ես թե՛ Բարելոնը գրավեցի, և թե՛ Նադինտարփիրին գերեցի: Այնուհետև այն Նադինտարփիրին Բարելոնով սպանեցի:

§ 21

Դարեհ թագավորն ասում է.— Իմ՝ Բարելոնում գտնված ժամանակ իմ դեմ ապստամբեցին հետեւալ երկրները³ Փարսը, Խուզեստանը, Մեղիան, Ասորեստանը, Եգիպտոսը, Մարդիանան³, Սաթագուշը⁴, Սկյութիան:

§ 22

Դարեհ թագավորն ասում է.— Մի մարդ Մարտիյա անունով, Զինչիխրայի որդին, Քուգանակա անունով քաղաք կա Փարսում: Նա (Մարտիյան) տիրում էր այնտեղը: Նա Խուզես-

¹ Եփրատ գետը:

² 18 դեկտեմբերի 529 մ. թ. ա.:

³ Մերփի:

⁴ Փենջար:

տանում ըմբռստացավ. ժողովրդին այսպես ասաց. «Ես իմանիշն եմ, Խուզեստանի թագավորը»:

§ 23

Դարեհ թագավորն ասում է.—Այն ժամանակ ես Խուզեստանի հետ հաշտության մեջ էի: Խուզեստանցիները ինձնից վախեցան, այն Մարտիալին բռնեցին, այն որ նրանց գերադույնն էր, նրան սպանեցին:

§ 24

Դարեհ թագավորն ասում է.—Մի մարդ Ֆրավարտիշ անունով, Մեդացի, Մեդիայում ապստամբեց: Ժողովրդին այսպես ասաց. «Ես Խշաթրիտան եմ, Հուլախշաթրիայի¹ սերնդից: Հետո Մեդական բանակը, որ արքունիքում էր, ապստամբեց իր դեմ և անցավ այն Ֆրավարտիշի կողմը: Նա Մեդիայում թագավոր դարձավ:

§ 25

Դարեհ թագավորն ասում է.—Փարսի և Մեդիայի բանակը, որը ինձ հետ էր, սակավաթիվ էր: Հետո ես բանակը ուղարկեցի, Վիդարնա անունով Փարսեցի իմ ծառային նրանց վրա հրամանատար կարգեցի և այսպես նրանց պատվիրեցի: «Գնացե՛ք, ջախչախեցե՛ք այն մեդական բանակը, որը իրեն իմը շի ճանաշում»: Հետո այն Վիդարնան բանակի հետ մեկնեց: Երբ Մեդիա հասավ, Մարուշ անունով քաղաք կա Մեդիայում, այնտեղ նա Մեդացիներին ճակատամարտ տվեց: Նա ով մեդացիների գերագույնն էր, գերվեց: Ահրամազդը ինձ օգնեց. շնորհիվ Ահրամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց ապստամբ բանակից: Անամակա ամսի 27-ն էր², երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Դրանից հետո իմ բանակը

¹ Կիւկսար:

² 12 հունվարի 522 մ. թ. ա.:

ինձ սպասեց Մեդիայում Կոմպադա կոչվող վայրում, մինչև
որ ես հասա Մեդիա:

§ 26

Դարեհ թագավորն ասում է.— Դադարշիշ անունով հայ
իմ ժառային¹ ես ուղարկեցի Արմինա²: Այսպես նրան պատ-
վիրեցի «Գնա՛ և ջախջախի՛ր այդ ապստամբ բանակը, որը
ինձ չի հապատակվում»: Հետո Դադարշիշը գնաց: Երբ նա հա-
սավ Արմինա, ապստամբները հավաքվեցին և դուրս ելան
Դադարշիշի դեմ (նրան) ճակատամարտ տալու համար: Ար-
մինայի մեջ ջուզա անունով մի ավան կա, ճակատամարտը
տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդն ինձ օգնեց: Շնորհիվ
Ահրամազդի իմ բանակը բավական մարդ սպանեց ապստամբ
բանակից: Թուրավահարա ամսի 8-ն էր³, երբ այսպես ճակա-
տամարտը տեղի ունեցավ:

§ 27

Դարեհ թագավորն ասում է.— Երկրորդ անգամ ապօս-
տամբները հավաքվեցին և նորից գուրս ելան Դադարշիշի դեմ
ճակատամարտելու: Տիգրա անունով մի բերդ կա Արմինա-
յում. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդն
ինձ օգնեց, Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ
բանակից բավական մարդ սպանեց: Թուրավահարա ամսի
18-ն էր⁴, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 28

Դարեհ թագավորն ասում է.— Երրորդ անգամ ապօս-
տամբները հավաքվեցին և նորից գուրս ելան Դադարշիշի դեմ
ճակատամարտի: Ույամա անունով մի բերդ կա Արմինայում.

¹ Ստորադրյալ:

² Հայաստան:

³ 21 մայիսի 521 մ. թ. ա.:

⁴ 31 մայիսի 521 մ. թ. ա.:

Հակատամարտը տեղի ունեցավ այնտեղ. Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Թափառչիշ ամսի 9-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Դադարչիշը մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեդիա:

§ 29

Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև Վառմիսա անունով պարսիկ իմ ծառային ես ուղարկեցի Արմինա, (և) այսպես նրան պատվիրեցի. «Գնա՛, ջախջախի՛ր այն ապստամբ բանակը, որն իրեն իմը չի ճանաշում»: Ուստի Վառմիսան գնաց: Երբ նա հասավ Արմինա, ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Վառմիսայի դեմ ճակատամարտի: Ասուրեստանում Իզարա անունով մի վայր կա: Ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց: Անամակա ամսի 15-ն էր², երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 30

Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին (և) դուրս ելան Վառմիսայի դեմ ճակատամարտի: Արմինայում Առտիարա անունով մի գավառ կա, այնտեղ նրանք ճակատամարտ տվեցին: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց: Թարուվահարքա³ ամսի վերջն էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Վառմիսան մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեդիա:

¹ 12 հունիսի 521 մ. թ. ա.:

² 31 դեկտեմբերի 522 մ. թ. ա.:

³ Հունիս, 521 մ. թ. ա.:

§ 31

Դարեհ թագավորն ասում է.— Հետո ես դուրս եկա Բաբելոնից և ուղեսորվեցի Մեդիա: Երբ ես ժամանեցի Մեդիա, մի քաղաք կա Մեդիայում Կունդուրուշ անունով, այնտեղ այն Ֆրավարտիշը, որը իրեն Մեդիայի թագավոր էր կոչում, բանակով առաջ շարժվեց իմ դեմ ճակատամարտելու: Ապա մենք ճակատամարտ տվեցինք: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ Ֆրավարտիշի բանակից ես բավական մարդ սպանեցի: Ազուկանից ամսի 25-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 32

Դարեհ թագավորն-ասում է.— Հետո այն Ֆրավարտիշը սակավաթիվ հեծյալներով փախավ և ընթացքն ուղղեց (գեպի) Ռազա² կոչվող վայրը Մեդիայում: Այն ժամանակ ես բանակը նրա ետեից ուղարկեցի: Ֆրավարտիշը գերվեց և ինձ մոտ բերվեց: Ես նրա թե՛ քիթը, երկու ականջները, լեզուն կտրեցի, և թե՛ նրա աշքը հանեցի. նրան իմ դարբասի մոտ շղթայված պահեցին (և) ամբողջ ժողովուրդը նրան տեսավ, որից հետո Հագմաթանայում³ նրան ցից հանեցի. ինչպես նաև այն մարդկանց, որոնք նրա ամենամերձավորներն էին, նրանց Հագմաթանայում մի բերդի մեջ կախեցի:

§ 33

Դարեհ թագավորն ասում է.— Զիսսանթախմա անունով մի մարդ, Ասագարթցի, իմ դեմ ապստամբեց. Ժողովրդին այսպես ասաց. «Ես Ասագարթիայի թագավորն իմ, Հուլախշաթրիայի⁴ սերնդից»: Հետո ես Փարսի և մեդական բանակը ուղարկեցի. Թախմասպագամ անունով մի մեղացու, իմ ծառա-

¹ 7 մայիսի 521 մ. թ. ա:

² Ժամանակակից սեյլ:

³ Համազան, Էքբաթան:

⁴ Կիսկար:

յին (Հպատակին) նրանց (վրա) հրամանատար կարգեցի (և) այսպես նրանց ասացի. «Դնացեք և ապստամբ բանակը, որ իրեն իմը չի ճանաշում, չարգեցե՛ք»: Ուստի Թախմապաղան բանակով գնաց և պատերազմեց Զիսսանթախմայի դեմ: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակը ջախջախեց, Զիսսանթախմային բռնեց և ինձ մոտ բերեց: Հետո ևս նրա թե՛ քիթը, թե՛ երկու ականջները կտրեցի, ինչպես նաև նրա աշքը հանեցի: Նրան իմ դարբասի մոտ շղթայված պահեցին, և ամբողջ ժողովուրդը նրան տեսավ: Հետո ևս նրան Արքելում¹ ցից հանեցի:

§ 34

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը Մեդիայում:

§ 35

Դարեհ թագավորն ասում է.— Պարթևն ու Վարկանան² իմ դեմ ապստամբեցին և հարեցին Ֆրավարտիշին: Իմ հայրը՝ Վշտասպը, Պարթևստանում էր: Ժողովուրդը նրան լքեց (և) ըմբոստացավ: Այն ժամանակ Վշտասպը իրեն հավատարիմ (մնացած) բանակի հետ դուրս ելավ, Վիշպառազատիշ քաղաք կա Պարթևստանում, այնտեղ ճակատամարտի պարթեների դեմ: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ Վըշտասպի բանակը ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Վիշպառնա ամսի 22-ն էր³, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

ԵՐՐՈՐԴ ՍՅՈՒՆԱԿ

§ 36

Դարեհ թագավորն ասում է.— Ապա ևս Ռագայից Վըշտասպի մոտ ուղարկեցի Փարսի բանակը. Հենց որ այն բա-

¹ Քաղաք է արեւլյան Ասուրեստանում (ժամանակակից Էրրել):

² Վեկան, Նոր պարսկերեն, Գորգան:

³ Տ մարտի 521 մ. թ. ա.:

նակը Վշտասպի մոտ հասավ, Վշտասպը այն բանակը վերցրեց և առաջ շարժվեց Պատիգրաբանակ կոչվող մի քաղաք կա Պարթևստանում. այնտեղ նա ապստամբների դեմ ճակատամարտ տվեց: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ Վշտասպը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Գարմապաղա ամսի 1-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 37

Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև երկիրը դարձավ իմը: Այս է իմ կատարածը Պարթևստանում:

§ 38

Դարեհ թագավորն ասում է.— Մարգիանա² անունով մի երկիր կա, այն իմ դեմ ապստամբեց: Ֆրադա անունով մի մարդ՝ Մարգիանցի, նրան հոչակեցին իրենց գերազույն (ղեկավար): Ապա ևս Դադարշիշ անունով մի փարսեցի, իմ ծառային Բակտրիայի սատրապին դեպի նա ուղարկեցի (և) այսպես պատվիրեցի. «Գնա և ջախչախի այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հպատակվում»: Ապա Դադարշիշը բանակով առաջ ընթացավ և Մարգիանցիներին ճակատամարտ տվեց: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապրստամբ բանակից բավական մարդ սպանեց: Ասսիյադիյա ամսի 23-ն էր³, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 39

Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև երկիրը դարձավ իմը: Այս է իմ կատարածը Բակտրիայում:

¹ 12 հուլիսի 521 մ. թ. ա.:

² Մերզ (Միջին Ասիայում):

³ 10 դեկտեմբերի 521 մ. թ. ա.:

§ 40

Դարեհ թագավորն ասում է.—Վահյազդատա անունով մի մարդ, որը գտնվում էր Յուտիյայի Թարավա քաղաքում, Փարսում։ Նա երկրորդ անձն էր, որ ապստամբեց Փարսում։ Ժողովրդին այսպես ասաց. «Ես Բարդիյան եմ Կյուրոսի Տրդին»։ Այդ ժամանակ Փարսի բանակը, որը մայրաքաղաքում էր, հրաժարվեց Հավատարմությունից (դավաճանեց) իմ դեմ ապրստամբեց և այն Վահյազդատայի կողմն անցավ։ Նա Փարսում թագավոր դարձավ։

§ 41

Դարեհ թագավորն ասում է.—Հետո ես ուղարկեցի ինձ Հետ եղած Փարսի և մեղական բանակը։ Արտավարդիյա անունով մի փարսեցի, իմ ծառային նրանց վրա Հրամանատար կարգեցի։ Փարսի մի այլ բանակ ինձ Հետ Մեդիա դնաց։ Հետո Արտավարդիյան բանակով առաջ ընթացավ դեպի Փարս։ Հետո որ Հասավ Փարս Ռախա անունով քաղաքը, որ է՝ Փարսում այնտեղ այն Վահյազդատան, որը իրեն Բարդիյա էր կոչում բանակով դուրս ելավ Արտավարդիյայի դեմ կռվելու։ Հետո նրանք ճակատամարտ տվեցին։ ԱՀրամազդն ինձ օգնեց։ ԱՀրամազդի շնորհիվ իմ բանակը Վահյազդատայի բանակից բավական մարդ սպանեց։ Թուրավահարա ամսի 12-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ։

§ 42

Դարեհ թագավորն ասում է.—Հետո այն Վահյազդատան սակավաթիվ հեծյալներով փախավ Փիշիյավագա։ Այնտեղից նա մի բանակ վերցրեց (և) նորից ելավ Արտավարդիյայի դեմ պատերազմելու։ Փարգա անունով մի սար կա, ճակատամարտը այնտեղ տեղի ունեցավ։ ԱՀրամազդն ինձ օգնեց, ԱՀրամազդի շնորհիվ իմ բանակը Վահյազդատայի բանակից բավական մարդ սպանեց։ Դարմապաղա ամսի

¹ 25 Մայիսի 521 մ. թ. ա.:

5-ն¹ էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ։ Նա թե Վահ-յաղդատային, և թե այն մարդկանց, որոնք նրա ամենամեր-ձավորներն (համհարզներ) էին բռնեց։

§ 43

Դարեհ թագավորն ասում է.—Հետո ևս այն Վահյաղդա-տային և այն մարդկանց, որոնք նրա առաջին մերձավորներն էին Հովադաշլայա անունով քաղաք կա Փարսում, այնտեղ նրանց ցից հանեցի։

§ 44

Դարեհ թագավորն ասում է.—Այս է իմ կատարածը Փարսում։

§ 45

Դարեհ թագավորն ասում է.—Այն Վահյաղդատան, որը իրեն Բարդիյա էր կոչում մի բանակ ուղարկեց Արախոզիա փարսեցի իմ ծառայի, Արախոզիայի սատրապի՝ Վիվանա-յի դեմ և մի մարդ նրա (բանակի) վրա գլխավոր կարգեց և նրանց այսպես ասաց. «Գնացեք ջարդեք Վիվանային և այն բանակը, որը Դարեհին է թագավոր ճանաչում»։ Ապա Վահ-յաղդատայի ուղարկած բանակը դուրս ելավ Վիվանայի դեմ ճակատամարտի։

Կապիշականիշ կոչվող ամրոց կա. ճակատամարտը տե-ղի ունեցավ այնտեղ. Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց։ Անամակա ամսի 13-ն էր², երբ ճակատա-մարտը տեղի ունեցավ։

¹ 16 հուլիսի 521 մ.թ. ա.:

² 29 գեկտեմբերի 521 մ.թ. ա.:

§ 46

Դարեհ թագավորն ասում է.—Նորից ապստամբները հավաքվեցին և Վիլանայի դեմ ճակատամարտի դուրս ելան։ Գանդուտավա անունով գավառ կա. այնտեղ ճակատամարտ տվեցին։ Աջրամազգն ինձ օգնեց։ Աջրամազգի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական (մարդ) սպանեց։ Վիլախնա ամսի 7-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ։

§ 47

Դարեհ թագավորն ասում է.—Հետո այն մարդը, որը այն բանակի գլխավորն էր, որին Վահյազգատան ուղարկել էր Վիլանայի դեմ, սակավաթիվ հեծյալներով փախավ։ Արշադա անունով ամրոց կա Արախողիայում գնաց այնտեղ։ Այն ժամանակ Վիլանան բանակով նրա ետևից գնաց։ Այնտեղ բռնեց նրան և նրա ամենամերձավորներին (գլխավոր մերձավորներին), (և) սպանեց։

§ 48

Դարեհ թագավորն ասում է.—Այնուհետև երկիրը իմբ դարձավ։ Այս է իմ կատարածը Արախողիայում։

§ 49

Դարեհ թագավորն ասում է.—Այն ժամանակ, երբ ես գտնվում էի Փարսում և Մեղիայում բարելոնացիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դեմ։ Մի մարդ Արխա անունով, հայ Հալդիտայի որդին Բարելոնում ապստամբեց։ Բարելոնիայի մեջ Դուրալա անունով մի վայր կա. այնտեղ առաջստամբեց։ Նա ժողովրդին այսպես էր խարում. «Ես նարուկուդրաշարան եմ Նարունախտայի որդին»։ Ապա բարելոնացիները ապստամբեցին իմ դեմ (և) անցան Արխայի կող-

¹ 21 գետրվարի 521 մ. թ. ա.:

մը: Նա գրավեց Բաբելոնը. նա Բաբելոնում թագավոր դարձավ:

§ 50

Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև ես Բաբելոն ուղարկեցի մի բանակ, որին հրամանտար կարգեցի Վինդաֆարնա անունով մի փարսեցի, իմ ծառային (Հպատակին): Այսպիս նրանց պատվիրեցի. «Գնացեք զախչախեցեք բարելոնի բանակը, որը ինձ շի ճանաչում»: Հետո Վինդաֆարնան բանակով զնաց Բաբելոնիա: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ Վինդաֆարնան ջարդեց բաբելոնացիներին և (նրանց) գերի վերցրեց: Մարգաշանա ամսի 22-ն էր¹, երբ նա գերի վերցրեց այն Արխային, որը իրեն նաբուկուդրաշարա էր կոչում և այն մարդկանց, որոնք նրա մերձավորագույն համախոհներն էին²: Այնուհետև ես հրամացեցի (որպեսզի) այն Արխային և նրա մերձավորագույն համախոհներին Բաբելոնի մեջ ցից հանեն:

ԱՌՐՈՌԴ ԱՅՈՒՆԱԿ

§ 51

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը Բաբելոնում:

§ 52

Դարեհ թագավորն ասում է.— Շնորհիվ Ահրամազդի այս է իմ կատարածը նույն տարում³: Թագավոր դառնալուց հետո ես մղել եմ 19 ճակատամարտ: Ահրամազդի շնորհիվ ես նրանց պարտության մատնեցի և 9 թագավոր գերի վերցրեցի.

Մեկը Դառնամատա անունով մոգ էր, նա ստելով այսպիս ասաց. «Ես Բաբրիյան եմ, Կյուրոսի որդին» նա Փարսը ապօտամբեցրեց:

¹ 27 նոյեմբերի 521 մ. թ. ա. ս.

² Դավակիցներ:

³ Մեկ տարվա ընթացքում:

Մեկը՝ Աթրինա անունով, Խուզեստանից էր, նա ստեղծով այսպես ասաց. «Ես Խուզեստանի թագավորն եմ»: Նա Խուզեստանը ապստամբեցրեց:

Մեկը՝ Նադինտարիր անունով, Բաբելոնացի. Նա ստեղծով այսպես ասաց. «Ես Նաբուկուդրաշրան եմ Նաբունախտայի որդին»: Նա Բաբելոնը ապստամբեցրեց:

Մեկը՝ Մարտիյա անունով, փարսեցի: Նա ստեղծով այսպես ասաց. «Ես Իմանիշն եմ Խուզեստանի թագավորը»: Նա Խուզեստանը ապստամբեցրեց:

Մեկը՝ Ֆրավարտիշ անունով, Մեդացի: Նա ստեղծով այսպես ասաց. «Ես Խշաթրիտան եմ Հուլախշաթրիայի սերնդից»: Նա Մեդիան ապստամբեցրեց:

Մեկը՝ Զիսսանթախմա անունով, Ասագարթցի. Նա ստեղծով այսպես ասաց. «Ես Ասագարթիայի թագավորն եմ. Հուլախշաթրայի տոհմից»: Նա Ասագարաթիան ապստամբեցրեց:

Մեկը՝ «Ֆրադա անունով, Մարգիանցի. Նա ստեղծով այսպես ասաց. «Ես Մարգիանայի թագավորն եմ». Նա Մարգիան ապստամբեցրեց:

Մեկը՝ Վահյազդատա անունով, փարսեցի նա ստեղծով այսպես ասաց. «Ես Բարդիյան եմ Կյուրոսի որդին»: Նա Փարսը ապստամբեցրեց:

Մեկը՝ Արխա անունով, Հայ. Նա ստեղծով այսպես ասաց. «Ես Նաբուկուդրաշրան եմ Նաբունախտայի որդին» Նա Բաբելոնը ապստամբեցրեց:

§ 53

Դարեհ թագավորն ասում է.— Այս 9 թագավորներին են գերեցի այն ճակատամարտերում:

§ 54

Դարեհ թագավորն ասում է.— Այն գալառները, որոնք ապստամբեցին՝ սուտը նրանց ապստամբ դարձրեց, որովհետև նրանք (խոռվարանները, ինքնակոչները) խաբում էին ժողովրդին: Ապա Աշրամազգը նրանց ինձ հանձնեց. ինչպես իմ կամքն էր նրանց հետ այնպես էլ վարվեցի:

§ 55

Դարեհ թագավորն ասում է.—Դու որ առաջիկայում թագավոր լինես, քեզ ստից լավ պաշտպանիր: Այն մարդուն, որը ստախոս լինի, նրան խիստ պատժիր. Եթե այսպես մտածես իմ երկիրը անվնաս կկենա:

§ 56

Դարեհ թագավորն ասում է.—Այս է իմ կատարածը, Ահրամազդի շնորհիվ, մեկ տարվա ընթացքում: Դու որ հետագայում կարդաս այս արձանագրությունը հավատա իմ կատարածին, այն սուտ չկարծես:

§ 57

Դարեհ թագավորն ասում է.—Ահրամազդը վկա, որ այս ճշմարտություն է, սուտ չէ, որ իմ կողմից կատարվել է մեկ տարվա ընթացքում:

§ 58

Դարեհ թագավորն ասում է.—Շնորհիվ Ահրամազդի եռ դեռ շատ գործեր եմ կատարել, որոնք գրված չեն այս արձանագրության մեջ: Այն պատճառով չեն գրվել՝ չլինի թե այն ով հետագայում այս արձանագրությունը կարդա նրան իմ կատարածը շատ թվա, որ նա չհավատա (և) այն սուտ կարծի:

§ 59

Դարեհ թագավորն ասում է.—Մինչև այժմ եղած նախկին թագավորները չունեն կատարած այնքան, ինչքան Ահրամազդի շնորհիվ կատարվել է իմ կողմից միայն մեկ տարվա ընթացքում:

§ 60

Դարեհ թագավորն ասում է.— Այժմ դու կհավատաս իմ կատարածին, ուստի մի թաքցնի: Եթե այս հրովարտակը շթաքցնես (և) ժողովրդին հաղորդես Ահրամազդը քեզ բարեկամ կլինի և քո սերունդը կբազմապատկվի և կապրես երկար:

§ 61

Դարեհ թագավորն ասում է.— Եթե այս հրովարտակը թաքցնես և ժողովրդին չհաղորդես, թող Ահրամազդը քեզ սպանի և թող քեզ սերունդ լինի:

§ 62

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը մի-
այն մեկ տարվա ընթացքում: Կատարեցի Ահրամազդի շնոր-
հիվ: Ահրամազդն ինձ օգնեց և մյուս աստվածները որ կան:

§ 63

Դարեհ թագավորն ասում է.— Այն բանի համար Ահրա-
մազդն ինձ օգնեց և այլ աստվածներ որ կան, որովհետեւ ոչ
չար էի, ոչ ստախոս էի, ոչ կեղեքիշ էի, ոչ ես, ոչ իմ տոհմը:
Ոչ ունկորին, ոչ անկարողին չեմ կեղեքել: Այն մարդը, որ
իմ թագավորական գերդաստանի հետ համագործակցեց նրան
լավ շահեցի, այն որ մեղավոր էր նրան խիստ պատժեցի:

§ 64

Դարեհ թագավորն ասում է.— Դու, որ հետագայում թա-
գավոր լինես այն մարդուն, որը ստախոս լինի և այն ով բըռ-
նակալ լինի, նրան բարեկամ մի լինի և դաժանորեն պատժիր:

§ 65

Դարեհ թագավորն ասում է.— Դու, որ հետագայում այս արձանագրությունը, որ ես գրել եմ և այս պատկերները տեսնես Աինի թե փշացնես, ինչքան կարող ես պահպանիր:

§ 66

Դարեհ թագավորն ասում է.— Եթե այս արձանագրությունը և այս պատկերները տեսնես և շփշացնես և որքան կարողություն ունես այն շպահպանես Ահրամազդը քեզ կպատժի, քեզ սերունդ չի լինի, և այն ինչ կատարես Ահրամազդն այն կնսեմացնի:

§ 68

Դարեհ թագավորն ասում է.— Սրանք են այն մարդիկ, որոնք այնտեղ էին, երբ ես Գառնմատա մոդին, որը իրեն Բարդիյա էր կոչոմ սպանեցի: Այն ժամանակ այս մարդիկ համագործակցեցին ինձ. Վինդաֆարնան Վայասպարայի որդին, փարսեցի. Ուտանան Թուխրիի որդին, փարսեցի, Փառւրարուվան Մարդունիայի որդին, փարսեցի. Վիդարնան Բագարիգնայի որդին, փարսեցի, Արդումանիշ Վահուկայի որդին, փարսեցի:

§ 69

Դարեհ թագավորն ասում է.— Դու, որ հետագայում թագավոր լինես պաշտպանիր այս մարդկանց գերդաստանը:

§ 70

Դարեհ թագավորն ասում է.— Ահրամազդի շնորհիվ այս արձանագրությունը գրեցի այլ ոճով... որ նախկինում չի եղել.

Դապա այս արձան
նագրությունը ինձ համար....

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՅՈՒՆԱԿ

§ 71

Դարեհ թագավորն ասում է.—Այս է իմ կատարածը 4-րդ և 5-րդ տարում այն բանից հետո, երբ ես թագավոր դարձա: Խուզեստան անունով գավառ կա, իմ դեմ ապստամբեց: անունով մի մարդ, Խուզեցի (խուզեստանցի) նրանք գլխավոր կարգեցին: Ապա ես Խուզեստան ուղարկեցի բանակը. Գառւքարուվա անունով, փարսեցի, իմ ծառային նրանց վրա գլխավոր կարգեցի: Ապա Գառւքարուվան բանակով շարժվեց Խուզեստան և խուզեստանցիների գեմ ճակատամարտ տվեց. նա ջախջախեց խուզեստանցիներին և գերի վերցրեց այն մարդուն, որը նրանց գերագույնն էր և ինձ մոտ բերեց. և ես նրան սպանեցի. Հետո գավառը դարձավ իմը:

§ 72

Դարեհ թագավորն ասում է.—
Ահրամազդին պաշտեցի, Ահրամազդի շնորհիվ ինչպես իմ կամքն էր, նրանց հետ այնպես վարվեցի:

§ 73

Դարեհ թագավորն ասում է.—Ով Ահրամազդին կպաշտի մինչև որ.

§ 74

Դարեհ թագավորն ասում է.—Բանակով արշավեցի Սըկյութիա ծովի այն կողմը, որ սրանկուն

¹ Արձանագրության հետագա տողերը խիստ աղճատված են:

պլիսարկ են դնում սկյութացինե-
րին շարդեցի, մի մասին էլ գերի վերցրի.
Սկունխուա անունով նրանց գերագույնին բռնեցին և ինձ մոտ
քերեցին: Ուրիշ մեկին, ինչպես իմ կամքն էր գերագույն կար-
գեցի: Ապա երկիրը իմը դարձավ:

§ 75

Դարեհ թագավորն ասում է.— Հետո Ահրամազդը
Ահրամազդին պաշտեցի.... Ահրամազդի շնորհիվ ինչպես իմ
կամքն էր այնպես վարվեցի:

§ 76

Դարեհ թագավորն ասում է.— Ով Ահրամազդին պաշտի
նրա գերդաստանը

ԱՇԽԱՐՀԱԿԴՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Ասուբեստան	Մակա
Աստղաբը,	Մարգիանա
Արարիա	Մարսլ
Արախողիա	Մեղիա
Արակադրիշ	Մուզրայ
Արեւէ	Յուտիյա
Արմինա	Նիսայա
Արշադա	Գատիգրաբանա
Առւտիարա	Գարթևանան
Բարելոն	Իմազա
Բակարիա	Իմախ
Գանդարա	Սաթագուլա
Գանդուտավա	Սիկուլա
Հուրալա	Սաթագուլուշ
Զագանա	Սիկուլիս
Զրանկա	Սողոգիա
Զուզա	Սպարգա
Թաքավա	Վարկանա
Վազապատիշ	Վիշապաւագատիշ
Իզարա	Տիգրա
Խորեգմ	Ույամա
Խուզեստան	Ուֆրատուվա
Կապադովկիա	Փարգա
Կապիշականիշ	Փարս
Կոմպադա	Փայլիսահուվարգիա
Կունդրուրուշ	Փիշիյավագա
Հազմաթանա	Քուզանակա
Հարուիլա	Քուզանակայա
Հունաստան	Հունաստան
Հուզապա	Հուզապա
Հունդրուրուշ	Հուզիսահուվարգիա
Հովհաննես	Հովհաննես
Հովուիլա	Հովուիլա
Հունաստան	Հունաստան
Հուզապայշայա	Հուզապայշայա

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աթըինա	Հալդիտա
Աինիրա	Հուվախշաթըիտա
Ահրամազգ	Մարդունիյա
Արդումանիշ	Մարտիյա
Արխա	Նաբուկուդրաչարա
Արյարամնե	Նաբունախտա
Արշամա	Նադինտարեր
Արտավարդիյա	Սկունխուա
Աքեմեն	Զինչիխրա
Աքեմենյան	Զիշփիշ
Բագարիգնա	Զիսսանթախտա
Բագարուխշ	Վայասպարա
Բարդիյա	Վահուկատա
Գառլարարուվա	Վահուկա
Գառլամատա	Վահուկատա
Գադարշիշ	Վահուկա
Գաղուհյա	Վահուկա
Գարեն	Վինդաֆարնա
Թախմասպաղաղա	Վիվանա
Թուխըլի	Վշտասպ
Իմանիշ	Ուպադարամա
Իշաթըրիտա	Ուտանա
Կամբիս	Յրադա
Կյուրոս	Յրավարտիշ



ԻՐԱՆԱԿԱՆ ԱՄՍԱՆՈՒՆԵՐ

Աղուկանիշ	Թախտարձիշ
Աթրիադիս	Թաքուվահարա
Անամակա	Թուրավահարա
Ասսիյադիյա	Մարդաջանա
Բագայադիշ	Վիրախնա
Գարմապադա	

ԴԱՐԵԶ ՎՇՏԱՍՊԻ ԲԻՍԵԹՈՒՆՑԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. խմբագիր՝ Օ. Պ. Համբարձումյան
Տեխնիկական խմբադիր՝ Հ. Ա. Հովհաննիսիան
Վեբստուգող սրբագրիչ՝ Լ. Մ. Բաղալյան

ՎՃ 09514

Պատվեր 96

Տպաքանակ 600

Հանձնված է արտադրության 1/II 1964 թ.:

Ստորագրված է տպադրության 3/III 1964 թ.:

Թուղթ՝ $84 \times 108^{1/22}$. Տպագր. 2=1,65 պայմ. մամուլ:

Հաշվ.՝ հրատ. 1,2 մամուլ:

Գինը՝ 3 կ.:

Երևանի պետական համալսարանի հրատարակչության տպարան:
Երևան, Աբովյան փող. № 104:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033239

974P² 85.

